

3. ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Հաշվի առնելով Եռամյա ծրագրով սահմանված՝ վիճակագրության զարգացման առումով ռազմավարական ուղղությունները, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ընդհանուր գործառնության հետևյալ հիմնական միջոցառումները (աշխատանքները)։

3.1. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է Խորհրդի 56 նիստ (այդ թվում՝ 2004թ.՝ 16, 2005թ.՝ 20 և 2006թ.՝ 20)։ Նիստերի ընթացքում քննարկվել է 258 հարց (այդ թվում՝ 2004թ.՝ 86, 2005թ.՝ 83 և 2006թ.՝ 89) և արդյունքում ընդունվել 262 որոշում (այդ թվում՝ 2004թ.՝ 108, 2005թ.՝ 80 և 2006թ.՝ 74) որոշում, որից՝ 111 նորմատիվ (այդ թվում՝ 2004թ.՝ 42, 2005թ.՝ 46 և 2006թ.՝ 23), 61 անհատական (այդ թվում՝ 2004թ.՝ 16, 2005թ.՝ 14 և 2006թ.՝ 31) և 90 արձանագրային (այդ թվում՝ 2004թ.՝ 50, 2005թ.՝ 20 և 2006թ.՝ 20)։

1. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների պահանջների կատարման, ինչպես նաև պետական վիճակագրության բնագավառը կարգավորող իրավահարաբերությունների հստակեցման ու կանոնակարգման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են, մասնավորապես, հետևյալ միջոցառումները.

ա/ Ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի, Խորհրդի 2004թ. մարտի 24-ի թիվ 03-Ա որոշմամբ հաստատվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2001-2003 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը»⁴, որն արտացոլում է «Հայաստանի Հանրապետության 2001-2003 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով⁵ սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը։

բ/ Ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված դրույթների և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ

⁴ Տես նաև՝ <http://www.armstat.am/arm/Publications/2004/eramya/ERAMYA.htm>

⁵ Ընդունված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2001թ. մարտի 13-ին։ Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր թիվ 11 (143), 11.04.2001թ.

2200-Ն որոշմամբ հաստատված հավելվածի կետ 176-ը, Ծառայության կողմից մշակվել և վիճակագրական տեղեկատվության թվով 38 սպառողների (այդ թվում՝ պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, հասարակական միություններ, զանգվածային լրատվամիջոցներ, միջազգային կազմակերպություններ և այլն) կարծիքին էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2007-2009 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո, օրենքի նախագիծը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով և ընդունվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2006թ. նոյեմբերի 29-ին⁶:

2. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված դրույթներին համապատասխանեցման նկատառումներից ելնելով, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նաև մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես.

ա/ «Պետական վիճակագրության մասին» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների մի շարք դրույթների միջև առկա օրենսդրական հակասությունների վերացման նկատառումներով պայմանավորված՝ Ծառայության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո (Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2003թ. օգոստոսի 13-ի թիվ 65-Ա որոշմամբ), Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո, օրենքի նախագիծը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով և ընդունվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2004թ. մայիսի 26-ի նիստում⁷:

բ/ Կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակներին համապատասխանեցման, և ըստ այդմ, դասակարգչի սկզբունքների ու մոտեցումների կիրառման միասնականության ապահովման նկատառումներով պայմանավորված, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներով հաստատվող՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և/կամ դրանց կողմից իրականացվող գործունեության տեսակներին առնչվող նախագծերում նշված (թվարկված) գործունեության տեսակները Ծառայության առաջարկությամբ խմբավորվել են համաձայն Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի:

⁶ Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր՝ թիվ 66 (521), 25.12.2006թ.

⁷ Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր թիվ 34 (333), 30.06.2004թ.

3. Շարունակվել են վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման, ամբողջականացման, ինչպես նաև արդեն իսկ ընդունված ու կիրառվող իրավական ակտերի՝ օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխանեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ընդհանուր առմամբ, հարկ է փաստել, որ վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտն արդեն իսկ ձևավորված է և աշխատանքներն ուղղորդված են դրանց կատարելագործմանը: Հաշվետու ժամանակահատվածում, Խորհրդի կողմից, մասնավորապես, հաստատվել են հետևյալ նորմատիվ իրավական ակտերը.

ա/ Խորհրդի 2004թ. ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» թիվ 12-Ն որոշում⁸:

Կարգը նշակվել է հիմք ընդունելով «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004թ. մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգը հաստատելու մասին» թիվ 333-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները և սահմանում է լրատվական գործունեություն իրականացնող ներկայացուցիչ լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի Ծառայությունում հավատարմագրման կանոնները և հավատարմագրված լրագրողի՝ Ծառայությունում գործունեության կազմակերպման հիմնադրույթները՝ նպատակ ունենալով ապահովել Ծառայության գործունեության թափանցիկությունը և այդ գործունեության մասին անմիջական տեղեկատվություն ստանալու նպատակով լրագրողների համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

բ/ Խորհրդի 2004թ. հունիսի 24-ի թիվ 13-Ն, 2005թ. մարտի 14-ի թիվ 02-Ն և 2006թ. օգոստոսի 23-ի թիվ 16-Ն որոշումները՝ «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն («Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին») որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»⁹:

Նշյալ որոշումների ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր կանոնադրության առանձին դրույթների հստակեցման ու կատարելագործման անհրաժեշտությամբ:

գ/ Խորհրդի 2004թ. օգոստոսի 20-ի թիվ 16-Ն և 2006թ. նոյեմբերի 24-ի թիվ 19-Ն որոշումները՝ «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն («Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և

⁸ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 12 (160), 17.05.2004թ

⁹ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի թիվ 17 (165), 02.08.2004թ., 9 (186), 15.04.2005թ., և 24 (233), 02.10.2006թ., տեղեկագրերում

ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին») որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»¹⁰:

Որոշումների ընդունումը պայմանավորված էր քաղաքացիական ծառայությունը կարգավորող օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման, ինչպես նաև նշյալ կարգի որոշ դրույթների հստակեցման անհրաժեշտությամբ:

դ/ Խորհրդի 2004թ. սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշում¹¹:

Կարգը մշակվել է հիմք ընդունելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հունիսի 25-ի «Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը հաստատելու մասին» թիվ 975-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները և սահմանում է Ծառայությունում վարչական վարույթի վերաբերյալ գործերի և դրանց հաշվառման գրանցամատյանների, ինչպես նաև վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները:

ե/ Խորհրդի 2005թ. հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 11-Ն («Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին») որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 09-Ն որոշում¹²:

Որոշման ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր նշյալ կարգի ընդունմանը հաջորդած ժամանակահատվածում օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման, առանձին դրույթների հստակեցման, ինչպես նաև ներկայացվող վիճակագրական դիտարկման փաստաթղթերի տեղեկատվական հոսքերի կանոնակարգման անհրաժեշտությամբ:

զ/ Խորհրդի 2006թ. մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 06-Ն որոշում¹³, որի համաձայն ուժը կորցրած են ճանաչվել Խորհրդի կողմից նախկինում ընդունված թվով 39 որոշումներ՝ պայմանավորված այդ իրավական ակտերով կարգավորվող իրավահարաբերությունների ժամկետային (միանվագ) բնույթով:

է/ Խորհրդի 2006թ. նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի թիվ 10 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 20-Ն որոշում¹⁴, որի ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր աշխատակարգի ընդունմանը հաջորդած

¹⁰ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի թիվ 20 (168), 15.09.2004թ. և 30 (239), 15.12.2006թ. տեղեկագրերում

¹¹ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 25 (173), 15.11.2004թ.

¹² Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 20 (197), 15.08.2005թ.

¹³ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 15 (224), 01.06.2006թ.

¹⁴ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 30 (239), 15.12.2006թ.

Ժամանակահատվածում օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման, ինչպես նաև որոշ դրույթների հստակեցման անհրաժեշտությամբ:

4. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Խորհրդի նորմատիվ որոշումների, որպես գերատեսչական նորմատիվ ակտ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում պետական գրանցման գործընթացը: Գրանցվել են ընդհանուր թվով 111 նորմատիվ իրավական ակտեր (որից՝ 92 վիճակագրական դիտարկման փաստաթղթեր ու դրանց լրացման հրահանգներ կամ դրանց փոփոխություններ ու լրացումներ), այդ թվում ըստ տարիների՝ 2004թ.՝ 42 (37), 2005թ.՝ 46 (41) և 2006թ.՝ 23 (14):

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով հարկ է նշել, որ հաստատված վիճակագրական դիտարկման փաստաթղթերը համապատասխանեցվել են նաև Տնտեսական գործունեության տեսակների և Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչներով սահմանված սկզբունքներին ու մոտեցումներին: Բացի այդ, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման նկատառումներով պայմանավորված, փոփոխվել են վիճակագրական դիտարկման մի շարք փաստաթղթերի ներկայացման ժամկետներն ու պարբերականությունը:

5. Հաշվի առնելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի, ինչպես նաև Խորհրդի 2002թ. մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի դրույթները, 2004թ ընթացքում Խորհրդի արձանագրային որոշումներով հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական թվով 34 հաշվետվությունների ձևերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 24 հաշվետվությունների (և դրանց լրացման հրահանգների), Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 7 հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 2 հաշվետվությունների (և դրանց լրացման հրահանգների) և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 1 հաշվետվության (և դրա լրացման հրահանգի):

3.2. ՄԵԹԱՏՎՅԱԼՆԵՐ

Ինչպես հայտնի է, Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ (1997թ. դեկտեմբեր) և Տվյալների

տարածման հատուկ ստանդարտ (1996թ. մարտ), որոնցից առաջինին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին:

Ծառայության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

Տվյալների տարածման հատուկ ստանդարտը ներառում է իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածների 21 խումբ ցուցանիշներ, որոնցից՝ 12 խումբ ցուցանիշների և դրանց մեթոդաբանությունների (ազգային հաշիվներ, արտադրության ինդեքս, զբաղվածություն, գործազրկություն, աշխատավարձ/եկամուտ, սպառողական գներ, արտադրողի գներ, վճարային հաշվեկշիռ, արտաքին առևտուր, միջազգային ներդրումային դիրք, արտաքին պարտք և բնակչություն) վարումն ու արդիականացումն իրականացվում է Ծառայության կողմից: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ցուցանիշների (ամսական և եռամսյակային) և դրանց մեթատվյալների ու համառոտ մեթոդաբանությունների (եռամսյակային) արդիականացման աշխատանքները: Ընդ որում, Տվյալների ադիականացման ժամկետները ներկայացված են Ծառայության կողմից վարվող նախնական տարածման օրացույցի էջում¹⁵:

Տվյալների տարածման հատուկ ստանդարտի պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է նաև Արժույթի միջազգային հիմնադրամի Ստանդարտների տարածման տեղեկագրում¹⁶, որը ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանությունը) անգլերեն լեզվով՝ տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, և վկայակոչում Ծառայության կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները¹⁷:

2005 թվականի ընթացքում թարգմանվել և Ծառայության ինտերնետային կայքի համապատասխան էջում¹⁸ են զետեղվել նաև մեթատվյալների հայերեն և ռուսերեն տարբերակները:

Անցումը Տվյալների տարածման հատուկ ստանդարտին հնարավորություն է ընձեռում շարունակել վիճակագրության համակարգային զարգացման գործընթացը՝ հետաճուտ լինելով ժամանակին, արժանահավատ, ամբողջական և հանրությանը մատչելի տվյալների պահանջների իրագործմանը:

¹⁵ <http://docs.armstat.am/nsdp/arc/>

¹⁶ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/>

¹⁷ <http://docs.armstat.am/nsdp/>

¹⁸ <http://www.armstat.am/arm/Metadata/Default.htm>

3.3. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ

Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կողավորման միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից շարունակվել են համապատասխան դասակարգիչների մշակման, գրանցման և ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

1. Իրականացված աշխատանքներից կարևորությամբ և/կամ մասշտաբայնությամբ հիշատակման է արժանի Եվրամիության վիճակագրական ծառայության ՏԱՍԻՍ ծրագրի «Վիճակագրություն-6» պայմանագրի «Վիճակագրական դասակարգումներ» բաղադրիչի շրջանակում Ծառայության կողմից մշակված «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» ազգային դասակարգիչը¹⁹ (մաս 1՝ դասակարգիչ, մաս 2՝ պարզաբանումներ, մաս 3՝ այբբենական անվանացանկ), որի մշակման համար հիմք են հանդիսացել Եվրոպական Համայնքի Սի Փի Էյ և ՊՈՌԴԿՈՄ, ինչպես նաև հաշվի առնվել Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից մշակված՝ մոդելային Էս Կա Պե դասակարգիչները: Դասակարգչի նախագիծը կարծիքի է ներկայացվել թվով 14 շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների: Պետական փորձաքննության արդյունքում դասակարգիչը հավանության է արժանացել Ստանդարտացման գիտատեխնիկական խորհրդի նիստում և հաստատվել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005թ. հունվարի 21-ի թիվ 6-Ն հրամանով (ՀԳ- 006.1- 2004, ՀԳ- 006.2- 2004, ՀԳ- 006.3- 2004): Նշված դասակարգչի հաստատումն, ըստ էության, նախադրյալներ է ստեղծում երկրում տեխնիկատնտեսական տեղեկատվության կողավորման միասնական ու արդեն իսկ ավարտուն և ամբողջական՝ «գործունեության տեսակ - արտադրանք» դասակարգչային գործիքակազմի ներդրման համար:

2. Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի մշակման 2006 թվականի ծրագիրը և Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2006 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 503-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի՝ «Տեխնիկատնտեսական տեղեկատվության դասակարգման և կողավորման համակարգի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը» VI բաժնի 6.2 կետի, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն պետական փորձաքննության է ներկայացվել Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի վերանայված տարբերակը²⁰ (համապատասխանում է Եվրոպական Համայնքների՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2002 թվականի փոփոխություններին (վերանայում 1.1)) և հաստատվել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006թ. նոյեմբերի 22-ի թիվ 231-Ն հրամանով: Մինչ հաստատումը դասակարգչի փոփոխությունների և լրացումների նախագիծը կարծիքի է ներկայացվել նաև թվով 15 շահագրգիռ նախարարությունների և

¹⁹ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 5¹, 11.03.2005թ., I-VI հատորներ

²⁰ Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 30¹, 25.12.2006թ.

գերատեսչությունների, ինչպես նաև զետեղվել Ծառայության ինտերնետային կայքում՝ այլ սպառողների առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով:

3. Խորհրդի 2006թ. դեկտեմբերի 21-ի թիվ 30-Ա որոշմամբ հաստատվել ու 2007թ. հունվարի 1-ից գործողության մեջ է դրվել «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» դասակարգչի ազգային տարբերակը (մաս 1՝ դասակարգիչ և մաս 2՝ պարզաբանումներ)²¹, որի մշակման համար հիմք է հանդիսացել Եվրոպական Համայնքների համանուն՝ «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» դասակարգիչը, 5-րդ միջի մակարդակում առանձնացնելով ազգային առանձնահատկությունները: Դասակարգիչը հնարավորություն կտա ձևավորել միասնական դասակարգչային հենք տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտություններում տնային տնտեսությունների սպառման ազդեցատների և դրա հիման վրա՝ սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար:

4. Զուգահեռաբար, շարունակվել են նաև տնտեսական գործունեության տեսակների և արտադրանքի դասակարգիչների՝ պետական վիճակագրության բնագավառում ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որի առնչությամբ մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) արդեն իսկ համապատասխանեցվել են նաև դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

5. Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրման նախադրյալների ձևավորման նպատակով հաշվետու ժամանակահատվածում լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Ծառայության բիզնես ռեզիստրի կայացման ուղղությամբ, օգտագործելով տեղեկատվության հավաքագրման ինչպես ուղղակի (այդ թվում՝ միջազգային համագործակցության շրջանակում իրականացված համապատասխան հետազոտությունների միջոցով) այնպես և անուղղակի (վարչական ռեզիստրների միջոցով) աղբյուրները:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությունից ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից, որպես համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից, սահմանված ժամկետներում և պարբերականությամբ ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ Ծառայության բիզնես ռեզիստրի վարման համար անհրաժեշտ տվյալները: Բիզնես ռեզիստրի ձևավորման և արդիականացման նպատակով տարեկան պարբերականությամբ հավաքագրվել և արդիականացվել են նաև վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալները:

Բիզնես ռեզիստրի տվյալների բազայի արդիականացման և ամբողջականացման նպատակով Եվրամիության վիճակագրական ծառայության SUՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն-6» պայմանագրի «Բիզնես ռեզիստր» բաղադրիչի շրջանակում 2004թ. հունիս-հուլիս ամիսներին անց է կացվել 9300 իրավաբանական անձանց ընտրանքային հետազոտություն: Նույն նպատակով, 2006թ. նոյեմբեր ամսին Համաշխարհային բանկի

²¹ Տեղադրված է Ծառայության ինտերնետային կայքի http://www.armstat.am/arm/Classificators/US_P/US_P.pdf էջում

Ֆինանսավորմամբ՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև տեխնիկական աջակցություն վիճակագրական կարողությունների զարգացման համար հոլանդական դրամաշնորհի շրջանակում՝ 5802 առևտրային իրավաբանական անձանց ընտրանքային հետազոտություն:

Ընդհանուր առմամբ հարկ է փաստել, որ նշված և նախկինում իրականացված մի շարք հետազոտությունների արդյունքներով հնարավոր է եղել ձևավորել հնարավորինս ամբողջական բիզնես-ռեզիստորը (իրավաբանական անձանց մասով), նախադրյալներ ստեղծելով հետագայում հիմնական շեշտադրումը դեպի դրա որակական կատարելագործումն ուղղորդելու համար:

6. Ինչպես արդեն նշվեց, բիզնես ռեզիստորի կայացումն իր հերթին փոխկապակցվում է նաև ընտրանքային մեթոդների ամբողջական ներդրմանը և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների ինտենսիվացմանը. այդ առնչությամբ, հաշվետու ժամանակահատվածի տարեկան ծրագրերով նախատեսված աշխատանքների ենթատեքստով, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների կիրառմամբ, իրականացվել են նախատեսված բոլոր վիճակագրական հետազոտությունների ընտրանքները և ստացված արդյունքների տարածման աշխատանքները: